

Սիմէոն զպիր կը բացազանչէ այս առ-
թիւ (էջ 206) .

Այս էր պատճառն առաջին ,
Որ սկիզբն եղեւ ամէն չարին :

ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵՍԱՐԱՅԻ

Երկպառակութիւնն առաջնորդին եւ ժո-
ղովրդեան մէջ կը շարունակուէր դեռ, երբ
հասաւ Լվով, 1630, Սեպտեմբեր 20ին, Խա-
չատուր Կեսարացի¹⁵ : Ասիկա Մովսէս կա-
թողիկոսի «մեծ աշակերտն» էր, կարգուած
Նոր-Ջուղայի առաջնորդ : 1630ին կանչած էր
զինքը կաթողիկոսն իր մօտ եւ յանձնած իրեն
Փոքր Ասիոյ, Խրիմի եւ Լեհաստանի նուիրա-
կութիւնը . անշուշտ միաժամանակ նաեւ Նի-
կոյ եպիսկոպոսի հարցին քննութիւնը :

Ճանապարհին հանդիպած էր Խաչատուր
իւր հայրենիքը Կեսարիա եւ տեսակցութիւն
ունեցած Գրիգոր Կեսարացւոյ հետ : Որովհե-

¹⁵ Վիեննայի Կայս. Մատենադարանի, Թ. 16,
ձաշոցի մէջ (Տաշեան՝ Ցուցակ, էջ 24) կ'արձանա-
դրուի. «Թվ. Ռշթ. Սեպտ. Ի. օրն երկուշաբթի...
եկաւ ի Լով նուիրակ տէր Խաչատուր վարդապետ
սրբալոյս մեռոնան եւ զիս մեղաւորս Խաչատուր արե-
ղաս առաքեաց նուիրակ սրբալոյս մեռոնան ի յայս աս-
տուածապահ քաղաքն Զամոսցա» : — Խաչատուր վարդ-
ապետ իրեն հետ ունէր զԳրիգորին վարդապետ եւ
զՍիմէոն Ջուղայեցի : Էջմ. Թ. 1099 ձեռագրին մէջ,
թղ. 121 ա կը կարգամ. «Յայտմ ամի եկն ի Լեհ նուի-
րակ տէր Խաչատուր արի եւ քաջ բարունապետն ի
տեառն տէր Մովսէս կաթողիկոսէ, ընդ նմին եւ հա-
րազատ քեռորդին հոգեւոր տիրոջն նմանեալ նմին ա-
ռաքինի վարուցն ճգնազգեաց եւ խստակրօն տէր Գրի-
գորի(ս) կրօնաւոր բանասէրն» :